



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հուլիսի 2014 թվականի N 737 -Ն

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱ-
ՆԱՅՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի
Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել՝

1) պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող
անձանց (բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով նախատեսված անձանց)
պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները՝ համաձայն N 1 հավելվածի.

2) պետական իշխանության մարմիններում տեխնիկական սպասարկում իրակա-
նացնող անձանց (բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով նախատեսված
անձանց) պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները՝ համաձայն N 2
հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում մարտական ապահովում և սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց առավելագույն լրավճարի չափերը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշման իմաստով աշխատավարձի հարաբերությունների կարգավորումը ներառում է նաև պաշտոնային դրույքաչափերի հիման վրա հաշվարկված աշխատավարձի ֆոնդի սահմաններում աշխատողների խրախուսման և օգնության հատկացման ֆինանսավորման հարաբերությունները կանոնակարգող դրույթները.

2) պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը որոշվում են պետական պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափի և սույն որոշման N N 1, 2 և 3 հավելվածներով հաստատված համապատասխան գործակիցների արտադրյալով.

3) մինչև սույն որոշումն ուժի մտնելը պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց գործող հիմնական և լրացուցիչ աշխատավարձերը սույն որոշմամբ սահմանված՝ տվյալ քաղաքացիական աշխատանք կատարողի կամ տեխնիկական սպասարկում իրականացնողի համար նախատեսված պաշտոնային դրույքաչափից բարձր լինելու դեպքում պահպանվում է քաղաքացիական աշխատանք կատարողի կամ տեխնիկական սպասարկում իրականացնողի գործող աշխատավարձի չափը.

4) պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց՝ առողջության համար ծանր, վնասակար

աշխատանքի կատարման դեպքում տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 12 տոկոսի չափով, առողջության համար առանձնապես ծանր և առանձնապես վնասակար աշխատանքի կատարման դեպքում՝ պաշտոնային դրույքաչափի 24 տոկոսի չափով, իսկ բարձր լեռնային վայրերում աշխատելու դեպքում տրվում է հավելում՝ 8000 դրամի չափով.

5) պետական կառավարման մարմիններում (բացառությամբ սույն կետի 5-րդ ենթակետում նշված մարմնի) քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցների հաշվին կարող է տրվել դրամական օգնություն մինչև մեկ պաշտոնային դրույքաչափի չափով՝ հետևյալ դեպքերում՝

ա. քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձի ամուսնության,

բ. տարերային աղետի հետևանքով քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձին վնաս պատճառելու,

գ. քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձի կամ նրա ընտանիքի անդամի երկարատև հիվանդության,

դ. քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձի ընտանիքի անդամի մահվան.

6) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց աշխատավարձի ֆոնդի մինչև 1 տոկոսի սահմաններում կարող է տրվել դրամական օգնություն մինչև մեկ պաշտոնային դրույքաչափի չափով՝ հետևյալ դեպքերում՝

ա. քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձի ամուսնության,

բ. տարերային աղետի հետևանքով քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձին վնաս պատճառելու,

գ. քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձի կամ նրա ընտանիքի անդամի երկարատև հիվանդության,

դ. քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձի ընտանիքի անդամի մահվան:

3. Իրավունք վերապահել պետական իշխանության մարմինների ղեկավարներին՝ աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցների հաշվին խրախուսել քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց՝ բարեխիղճ աշխատանքի համար:

4. Պետական իշխանության մարմինների ղեկավարներին՝

1) ապահովել, որ քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը՝ հարկերը և նպատակային սոցիալական վճարը վճարելուց հետո ցածր չլինեն օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափից.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում ապահովել պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնների անվանումների համապատասխանեցումը Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 873-Ն հրամանով հաստատված՝ զբաղմունքների դասակարգչին:

5. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ յուրաքանչյուր անգամ բազային աշխատավարձի փոփոխության դեպքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ համաձայնեցնելով ներկայացնել համապատասխան կառավարության որոշման նախագիծ՝ նվազեցնելով սույն որոշման N 4 հավելվածով հաստատված լրավճարների չափերը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2014 թվականի հուլիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2014 թ. հուլիսի 25
Երևան



Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունիսի 3-ի N 737 - Ն որոշման

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂ
ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ

NN ը/կ	Պաշտոնի անվանումը	Պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցը
ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍԶՈՒԹՅՈՒՆ		
1.	Տեսչության պետ	8.50
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՅԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԹՈՒՉՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՉՔԱՅԻՆ ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ		
2.	Վարչության պետ	5.71
3.	Վարչության պետի տեղակալ	4.70
4.	Գլխավոր մասնագետ-տեսուչ	3.88
5.	Գլխավոր մասնագետ	3.88
6.	Առաջատար մասնագետ	3.21
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ		
7.	Բժիշկ-տարածքային ստորաբաժանման ղեկավար	2.75
8.	Վերահսկողության բաժնի պետ-աշխատանքի պետական տեսուչ	2.75
9.	Վերահսկողության մասնագետ-աշխատանքի պետական տեսուչ	2.70
10.	Հանրային առողջության ոլորտի բժիշկ մասնագետ	2.70
11.	Բժիշկ-փորձագետ	2.70
12.	Բժիշկ-համաճարակաբան	2.70
13.	Բժիշկ-հիգիենիստ, ղեղագետ	2.70
14.	Մեթոդիստ	2.70
15.	Բուժվիճակագիր, համաճարակաբանի օգնական	1.25
ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ		
16.	Ռազմական արդյունաբերության գծով խորհրդատու	2.70

Գիտություն		
17.	Գիտահետազոտական ինստիտուտի վերլուծական կենտրոնի պետ- ինստիտուտի պետի տեղակալ	4.80
18.	Ավիացիոն ինստիտուտի բաժանմունքի ավագ մասնագետ	4.78
19.	Հետազոտությունների ինստիտուտի պետի խորհրդական- իրավաբան, հետազոտությունների ինստիտուտի պետի խորհրդական-վերլուծող	4.66
20.	Հետազոտությունների ինստիտուտի ավագ գիտնական վերլուծաբան, հետազոտությունների ինստիտուտի խմբի պետ	4.55
21.	Հետազոտությունների ինստիտուտի խմբի մասնագետ-տեխնոլոգ, խմբի մեթոդիստ, խմբի և կենտրոնի գիտնական-վերլուծաբան	3.43
22.	Հետազոտությունների ինստիտուտի վերլուծական կենտրոնի թարգմանիչ, հետազոտությունների ինստիտուտի գիտության բաժնի խմբագիր	2.47
Կրթություն		
23.	Ամբիոնի պետ	3.75
24.	Ցիկլի պետ	3.43
25.	Ավագ դասախոս	2.79
26.	Դասախոս, դասախոս գեղագիտության գծով, հանրակրթական առարկաների դասախոս	2.47
Առողջապահություն		
27.	Ավագ օրդինատոր	2.75
28.	Ախտորոշման բժիշկ, բժիշկ, բժիշկ-անզգայացնող, բժիշկ-լաբորանտ, բժիշկ-համաճարակաբան, բժիշկ-մանրէաբան, բժիշկ-օրդինատոր, օրդինատոր, բուժկետի պետ-բժիշկ, օրդինատոր-նյարդաակնաբույժ, ֆունկցիոնալ ախտորոշման բժիշկ, ֆիզիոթերապևտիկ կաբինետի պետ	2.70
29.	Բուժակ-դեղատան պետ, բուժկետի պետ-բուժակ, բուժակ, դեղատան պետ, ավագ քույր տնտեսվար, անզգայացնող	1.50
30.	Բուժվիճակագիր, ախտորոշման բաժանմունքի լաբորանտ, հոսպիտալի լաբորատորիայի լաբորանտ, կլինիկական լաբորանտ, ռենտգեն-լաբորանտ, ռենտգենտեխնիկ, մերսող, բուժքույր-անզգայացնող, դեղագործ	1.25
31.	Բժշկական հանձնաժողովի քարտուղար-բուժքույր, բուժագործության բուժքույր, բուժքույր, բուժքույր-դիետոլոգ, գիպսավորման բուժքույր, ռազմաբժշկական հանձնաժողովի քարտուղար, էլեկտրասրտագրման բուժքույր, վիրահատարանի բուժքույր, վիրակապարանի բուժքույր, հերթապահ-բուժքույր-անզգայացնող, հերթապահ-բուժքույր, ներզննման կաբինետի բուժքույր, քույր տնտեսվար, տեխնիկ-պրոթեզավորող, բուժմատենավար, մատենավար	1.15
Մշակույթ		
32.	Ռազմական թանգարանի տնօրենի տեղակալ-գիտական քարտուղար	1.70
33.	Երգի համույթի ղեկավար, պարային խմբի ղեկավար, ռազմական	1.65

	ինստիտուտի թանգարանի պետ	
34.	Մշակութալուսավորչական աշխատանքների բաժանմունքի խմբագիր, թանգարանի գիտական աշխատող	1.60
35.	Պարարվեստի ուսուցիչ, ձևավորող նկարիչ, նկարիչ-դիզայներ, երաժիշտ	1.55
36.	Ակումբի, գրադարանի-պետ, ակումբի պետ-գրադարանավար, գրադարանի վարիչ	1.50
37.	Լուսաթղթակից, լուսանկարիչ, կինոմեխանիկ, կինոռադիոմեխանիկ	1.45
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
38.	Բաժանմունքի պետ, բժշկական հաստատությունում՝ ընդունարանի վարիչ, կաբինետի վարիչ, բաժանմունքի վարիչ	2.75
39.	Ֆինանսական մասի պետ, կառուցվածքային ստորաբաժանումներում գլխավոր ինժեներ, բժիշկ, դեղագետ, պրովիզոր	2.70
40.	Առաջատար մասնագետ, վարչության պետի օգնական, ավագ ինժեներ, ավագ հաշվապահ	2.50
41.	Ռազմականացված ջոկատի պետ	2.50
42.	Ռազմականացված ջոկատի պետի տեղակալ	2.40
43.	Ավտոտնտեսության պետ, կառուցվածքային ստորաբաժանումներում գլխավոր մեխանիկ	2.20
44.	Մեխանիկ	1.70
45.	Պահպանության ստորաբաժանումների խմբի պետ	1.30
46.	Ավագ հրաձիգ, գեղարվեստական մասի ղեկավար, ռեժիսոր, նկարիչ-ձևավորող, բուժական ֆիզկուլտուրայի հրահանգիչ, համաճարակագետի օգնական, ավագ տեսուչ, ավագ բուժքույր	1.25
47.	Դեղագործ, մերսող, մեթոդիստ, ֆիզկուլտուրայի հրահանգիչ, ատամնատեխնիկ, լաբորանտ	1.20
48.	Հրաձիգ, անասնաբույժ, ավագ հաշվառող, տեսուչ, բուժմատենավար, բուժքույր	1.15
49.	Հաշվառող	1.10
50.	Կրտսեր բուժքույր	1.05
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ		
51.	Բժիշկ	2.70
52.	1-ին կարգի տեսուչ	1.25
53.	2-րդ կարգի տեսուչ	1.20
54.	Բուժքույր	1.15
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ		
55.	Բժիշկ	2.70
56.	Բուժաբքավորումների ինժեներ	2.50
57.	Ավագ բուժաշխատող	1.25
58.	Դիետային բուժաշխատող, բուժաշխատող, ատամնատեխնիկ, լաբորանտ	1.20

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ		
59.	Դիրիժոր	1.50
60.	Երաժշտական խմբի ղեկավարի տեղակալ, մշակութային միջոցառումների կենտրոնի պետ	1.40
61.	Տեխնիկայի և սարքավորումների բազայի պետի տեղակալ	2.00
62.	Երաժիշտ	1.30
63.	Խմբի հրամանատար	1.30
64.	Խմբի ավագ	1.20
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
65.	Կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող խորհրդատու	4.75
66.	Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող, համակարգչային ցանցի ադմինիստրատոր	2.75
67.	Իրավախորհրդատու	2.70
68.	Գլխավոր հաշվապահ, շինարար-ճարտարագետ, ՏՏ այլ սպասարկող մասնագետ, համակարգչային տեխնիկայի սպասարկող մասնագետ	2.50
69.	Հաշվապահ, հաշվապահ-գանձապահ կադրերի գծով տեսուչ, ինժեներ, տնտեսագետ	2.30
70.	Գրադարանի վարիչ	1.55
71.	Ավագ գրադարանավար, գրադարանավար, գանձապահ	1.50
72.	Արխիվի աշխատող	1.25
73.	Ադմինիստրատոր	1.25
74.	Հաշվետար	1.10
75.	Քաղաքացիական աշխատանք կատարող այլ աշխատողներ	1.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունիսի 3-ի N 737 - Ն որոշման

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ

NN ը/կ	Պաշտոնի անվանումը	Պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցը
ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐ		
1.	Հյուրանոցի տնօրեն, մարզիչ	1.86
2.	Հյուրանոցի տնօրենի տեղակալ, կաթսայատան պետ, պանսիոնատի պետ, լվացքատան պետ, հրթիռային վառելանյութի և վառելիքի բազայի պետի օգնական, պարենի և տեխնիկական միջոցների պահպանման բազայի պետի օգնական՝ նյութատեխնիկական ապահովման գծով, անասնաբույժ-դեղատան պետ, անասնաբույժ-դեղատան պետ-փորձագետ, անասնաբուժության հրահանգիչ-լաբորանտ, անասնաբուժակ, անասնաբուժության հրահանգիչ, լաբորանտ-մանրէաբան, կոշկակարական արհեստանոցի պետ-կոշկակար, ագտային կայանի տեխնիկ, բաղնիքի պետ, բաղնիքի պետ-օպերատոր, բյուրոյի պետ-օպերատոր, խմբի պետ, կենտրոնի պետ, կոմբինատի պետ-բաղնիքի պետ, հաշվարկի պետ, ճաշարանի պետ-խոհարար-հրահանգիչ, ճաշարանի պետ-խոհարար, խոհարար-հրահանգիչ, ջոկի հրամանատար-խոհարար, ջոկի հրամանատար-ճաշարանի պետ, տեխնիկ լաբորանտ, ՆՕ (նախկինում օգտագործված) պահեստամասերի պահեստի պետ, ավտոտեխնիկայի պահեստի պետ, պահեստարանի պետ, պահեստի պետ, պահոցապետ, պարենի և իրային գույքի պահեստի պետ, ռազմատեխնիկական գույքի պահեստի պետ, կոմունալ շահագործման ծառայության պահեստի պետ, հակահրդեհային գույքի պահեստի պետ, ջոկի հրամանատար-պահեստարանի պետ	1.80
3.	Պարետ- տեխնիկ- շենքերի վերակացու, տեխնիկ շենքերի վերակացու, հանրակացարանի պարետ, հանրակացարանի վարիչ, հյուրանոցի ադմինիստրատոր, բյուրոյի պետ-օպերատոր, գործավարության պետ,	1.73

	ցյուղատնտես, զինվորական հաշվառման սեղանի պետ, սրբագրիչ, ուսումնական պիտույքների պահեստի պետ, տեխնիկ-լաբորանտ, տնային կառավարչության պետ	
4.	Բարձրավիճակի ցանցերի էլեկտրիկ, էլեկտրիկ-օպերատոր, էներգետիկ, հերթապահ, հերթապահ-էլեկտրիկ, հերթապահ-դիզելավար, ավագ ընդունող-հանձնող, բրիգադավար, գանձապետ, գծագրող, հաշվետար, հնադարանապահ, էլեկտրամեխանիկ, էլեկտրամեխանիկ դիզելավար, էլեկտրամոնտյոր, էլեկտրատեխնիկ	1.67
5.	Ավագ տեսուչ, բազմացնող տեխնիկայի օպերատոր, գործավար, գործավար (ոչ գաղտնի գործավարության), գործավար-մեքենագրուհի, գրագիր, գրագիր-գծագրող, գրագիր-գործավար, դիսպետչեր, լաբորանտ-գծագրող, լաբորանտ-գործավար, մեքենագրուհի, մեքենարուհի գործավար, մեքենագրուհի-ոչ գաղտնի գործավարության գործավար, տեսուչ, տեսուչ հաշվառման գծով	1.25
6.	Էլեկտրամոնտյոր, էլեկտրիկ, էլեկտրիկ-դիզելավար, էլեկտրիկ-սանտեխնիկ, հերթապահ էլեկտրիկ-դիզելավար, ճոպանասարքի ավագ բանվոր, ավագ խոհարար	1.60
7.	Վարորդներ ա) բեռնատար ավտոտրանսպորտի՝ ըստ բեռնատարողության (տոննա) - մինչև 5 տոննա - 5- 10 տոննա - 10- 13 տոննա բ) մարդատար-ծառայողական ավտոտրանսպորտի՝ ըստ շարժիչի աշխատանքային ծավալի (լիտր) - մինչև 1,8 լիտր - 1,8- 3,5 լիտր - 3,5 լիտրից ավելի	1.45 1.50 1.55 1.40 1.45 1.50
8.	Հնոցապան-ջրմուղագործ, փականագործ-շոգեմղագործ, փականակագործ-սանտեխնիկ, հյուսն, հյուսն-ապակեգործ,	1.51
9.	Աղբահան, հերթապահ օպերատոր, օպերատոր-սանտեխնիկ, սանտեխնիկ, ախտահանող, խոհանոցի բանվոր, խոհանոցի օժանդակ բանվոր, օպերատոր, ճոպանասարքի բանվոր, քարտաշ, քույր-տնտեսավար, սանիտար, սանիտար-ախտահանող, սանիտարուհի, սանիտարուհի-ախտահանող, սպասք լվացող, տեխնիկական աշխատող,	1.25
ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆԵՐՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐ		
10.	Արհեստանոցի վարիչ, կաթսայատան վարիչ, լվացքատան վարիչ, ճաշարանի վարիչ	1.80
11.	Կռունկավար, էքսկավատորավոր, կոմպրեսատորավար	1.65
12.	Վարորդ՝ պետական իշխանության մարմնի աշխատակազմում	1.60
13.	Տնտեսավար, պահեստապետ, պահակապետ, պարետ	1.50
14.	Ավագ տեխնիկ- ջերմո-տեխնիկ	1.55

15.	Թիթեղագործ, տեխնիկ, ջերմո-տեխնիկ, հեռախոսակապի տեխնիկ, կապի մասնագետ, հղկող, հյուան, խառատ, վարորդ	1.50
16.	Էլեկտրագետ, փականագործ, էլեկտրագետ-փականագործ, ավտոփականագործ, կարբյուրատորագործ, էլեկտրամոնտաժող, էլեկտրամոնտյոր, էլեկտրամեխանիկ, գազաէլեկտրամեխանիկ, գազաէլեկտրաեռակցող, ավտոէլեկտրիկ, գազաեռակցող, շարժիչագործ, կարբյուրատորների նորոգման վարպետ, վուլկանացնող, ավտոմեխանիկ	1.40
17.	Գործավար, գործավար-օպերատոր, գրագիր, համակարգչային օպերատոր, օպերատոր, պատճենահանող, քարտուղար, մեքենագրուհի, քարտուղար-մեքենագրուհի և նրան հավասարեցված պաշտոններ, ավագ խոհարար, սանտեխնիկ	1.25
18.	Հնոցապան, գողող, եռակցող, դողագործ, ավտովացող, պաստառապատող, գործիքագործ	1.20
19.	Խոհարար, մատուցող խոհարար, բուֆետապան, դերձակ, կոշկակար, արդուկող, քույր-տնտեսուհի	1.20
20.	Պահակ, գիշերապահ, անցագրային կետի հերթապահ, դիսպետչեր	1.10
21.	Առաքիչ, մատակարար-առաքիչ, ցրիչ, ախտահանող, վերելակավար, դռնապան, հատակ փայլեցնող, հանդերձապահ, լվացարար, աման լվացող, շենքերի, կառույցների և սարքավորումների սպասարկման ու ընթացիկ վերանորոգման բանվոր, այգեպան, կազմարար, բակապան	1.00
22.	Հավաքարար և այլ տեխասպասարկողներ	1.00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2014 թվականի
հուլիսի 3-ի N 737 - Ն որոշման

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՐՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ
ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

NN ը/կ	Պաշտոնների անվանումը	Պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները՝ ըստ զինված ուժերում աշխատանքային տարիների					
		մինչև 2 տարի	2-5 տարի	5-10 տարի	10-15 տարի	15-20 տարի	20 և ավելի տարի
	Ավիացիա						
1.	Էսկադրիլիայի հրամանատար	3.39	3.50	3.61	3.72	3.83	3.94
2.	Էսկադրիլիայի հրամանատարի տեղակալ	3.29	3.39	3.50	3.60	3.71	3.82
3.	Ջոկատի հրամանատար, ջոկատի հրամանատարի տեղակալ-հրահանգիչ, օդանավի հրամանատար հրահանգիչ, Էսկադրիլիայի ղեկապետ, առաջատար ինժեներ	3.18	3.28	3.38	3.49	3.59	3.69
4.	Օդանավի հրամանատարի օգնական	3.07	3.17	3.27	3.37	3.47	3.57
5.	Ջոկատի ղեկապետ, հրահանգիչ	2.97	3.06	3.16	3.25	3.35	3.44
6.	Ավագ կողային ինժեներ հրահանգիչ, կողային ինժեներ հրահանգիչ	2.86	2.95	3.04	3.13	3.23	3.32
7.	Կողային ինժեներ, ինժեներ, տեխնիկ	2.76	2.84	2.93	3.02	3.10	3.19
8.	Ավագ կողային ռադիստ-հրահանգիչ, տեխնիկ-օպերատոր, կողային ռադիստ, կողային տեխնիկ	2.65	2.73	2.82	2.90	2.98	3.07
	Այլ ոլորտներ						

9.	Գլխավոր ինժեներ	1.83	1.91	1.98	2.05	2.13	2.20
10.	Արհեստանոցի պետ-ավագ ինժեներ, պարենային և իրային, կոմունալ շահագործման, ֆինանսական ծառայությունների պետեր, բաժանմունքի պետ-գլխավոր էներգետիկ, գլխավոր մեխանիկ	1.80	1.87	1.93	1.99	2.05	2.11
11.	ՀՕՊ միջոցների նորոգման արհեստանոցի պետ, ավագ մեխանիկ ավիասարքավորումների, ավիասպառազինության և ռադիոէլեկտրոնային սարքավորումների գծով, ինժեներ մասնագետ, մեթոդիստ, ՋՀՀ-ի և ՌԼԿ-ի նորոգման մասնագետ, գիտատեխնիկական և փորձարարական բաժանմունքների ավագ մասնագետ, կապի և ԱԿՀ ցիկլի լաբորատորիայի պետ, պահակախմբի պետ, մարզիչ, ինժեներ էլեկտրամեխանիկ, էլեկտրոնագետ, էներգետիկ, հետազոտող, մեխանիկ, նորոգող, պետստուգող, ջերմատեխնիկ, ռադիոտեխնիկ, ռադիոֆիզիկոս, ֆինանսական մասի պետ	1.74	1.80	1.86	1.93	1.99	2.05
12.	Պահակախմբի պետի տեղակալ, բաժանմունքի պետ, ջոկի հրամանատար, հերթափոխի պետ, հրաձգարանի պետ, պարետ, ռադիոկապի տեխնիկ, ռադիո-հանգույցի պետ, լվացքատան պետ, զրահատանկային տեխնիկայի նորոգման բաժանմունքի	1.67	1.73	1.80	1.87	1.93	2.00

	Էլեկտրոնագետ, հակահրդեհային հսկողության տեսուչ, ավագ վարորդ, բազայի պետի օգնական, անասնաբուժ-դեղատան պետ, անասնաբուժակ, արհեստանոցի, բաղնիքի, բյուրոյի, կենտրոնի, կոմբինատի, հաշվարկի, ճաշարանի, պահեստի, պահեստարանի, պահոցի պետեր, ավագ հաշվապահ						
13.	Հաշվապահ, ավագ հեռախոսավար, գծային վերակացու, ռադիոհեռա-խոսավար, ռադիստ, քիմիկ-վերլուծող, մեխանիկ	1.68	1.74	1.80	1.86	1.92	1.98
14.	Գաղտնի գործավարության գործավար, գործավար ԷՀՄ օպերատոր, ավագ խոհարար, ավագ վարպետ, ավագ օպերատոր, ավտոտեխնիկ-դիսպետչեր, էլեկտրամեխանիկ, էլեկտրամոն-տյոր, շարժիչների և ուժային փոխանցիչի նորոգման վարպետ, շնաբույժ	1.62	1.68	1.74	1.80	1.85	1.91
15.	Ավագ հրաձիգ	1.56	1.62	1.67	1.73	1.79	1.84
16.	Հրաձիգ, պահակ, հրշեջ-փողավար	1.52	1.58	1.64	1.70	1.76	1.82
17.	Հաշվարկի հրամանատար, ջրի հրամանատար- վարորդներ	1.50	1.56	1.61	1.67	1.72	1.77
18.	Ավագ գործիքագործ, մեխանիկ, վարպետ, վարորդ*, բուլդոզերավար, էքսկավատորավար, կրունկավար, գազաեռակցող, դարբին, կուտակ-չագործ, խառատ, շարժիչագործ, ֆրեյզերագործ, ավտոփականագործ, թիթեղագործ, հղկող	1.44	1.49	1.55	1.60	1.65	1.71
19.	Վուկանացնող, փականագործ,	1.35	1.40	1.45	1.51	1.56	1.62

20.	Վարորդներ-ավտոկոուսնկի, ավտո- բեռնիչի, մեխանիկ, գրեյդերավար, էլեկտրիկ, լցավորող, սանիտար, օպերատոր, մալուխագործ, խոհարար, տրակտորիստ, ջերմաքարշի մեքենավար	1.33	1.38	1.43	1.49	1.54	1.59
21.	Ախտահանող, խոհանոցի բանվոր, քարտաշ, քույր-տնտեսվար, սանիտար, ճոպանասարքի բանվոր, սանիտարուհի, սպասք լվացող, տեխնիկական աշխատող	1.31	1.36	1.41	1.47	1.52	1.57

Ծանոթագրություն. * 13 և ավելի տոննա բեռնատարողությամբ ավտոտեխնիկայի
վարորդներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2014 թվականի
հուլիսի 3-ի N 737 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ
ԼՐԱՎՃԱՐԻ ՉԱՓԵՐԸ

NN ը/կ	Պաշտոնի անվանումը	Լրավճարը
ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ		
1.	Ռազմական արդյունաբերության գծով խորհրդատու	0
Գիտություն		
2.	Գիտահետազոտական ինստիտուտի վերլուծական կենտրոնի պետ- ինստիտուտի պետի տեղակալ	20 653
3.	Ավիացիոն ինստիտուտի բաժանմունքի ավագ մասնագետ	21 976
4.	Հետազոտությունների ինստիտուտի պետի խորհրդական-իրավաբան, հետազոտությունների ինստիտուտի պետի խորհրդական-վերլուծող	21 663
5.	Հետազոտությունների ինստիտուտի ավագ գիտնական վերլուծաբան, հետազոտությունների ինստիտուտի խմբի պետ	20 813
6.	Հետազոտությունների ինստիտուտի խմբի մասնագետ-տեխնոլոգ, խմբի մեթոդիստ, խմբի և կենտրոնի գիտնական-վերլուծաբան	21 000
7.	Հետազոտությունների ինստիտուտի վերլուծական կենտրոնի թարգմանիչ, հետազոտությունների ինստիտուտի գիտության բաժնի խմբագիր	21 500
Կրթություն		
8.	Ամբիոնի պետ	0
9.	Ցիկլի պետ	0
10.	Ավագ դասախոս	0
11.	Դասախոս, դասախոս գեղագիտության գծով, հանրակրթական առարկաների դասախոս	9 634
Առողջապահություն		
12.	Ավագ օրդինատոր	0
13.	Ախտորոշման բժիշկ, բժիշկ, բժիշկ-անզգայացնող, բժիշկ-լաբորանտ, բժիշկ-համաճարակաբան, բժիշկ-մանրէաբան, բժիշկ-օրդինատոր, օրդինատոր, բուժկետի պետ-բժիշկ, օրդինատոր-նյարդաակնաբույժ, ֆունկցիոնալ ախտորոշման բժիշկ, ֆիզիոթերապևտիկ կաբինետի պետ	0
14.	Բուժակ-դեղատան պետ, բուժկետի պետ-բուժակ, բուժակ, դեղատան պետ, ավագ քույր տնտեսվար, անզգայացնող	31 000
15.	Բուժվիճակագիր, ախտորոշման բաժանմունքի լաբորանտ, հոսպիտալի լաբորատորիայի լաբորանտ, կլինիկական լաբորանտ, ռենտգեն- լաբորանտ, ռենտգենտեխնիկ, մերսող, բուժքույր-անզգայացնող, դեղագործ	32 000
16.	Բժշկական հանձնաժողովի քարտուղար-բուժքույր, բուժագործության	32 000

	բուժքույր, բուժքույր, բուժքույր-դիետոլոգ, գիպսավորման բուժքույր, ռազմաբժշկական հանձնաժողովի քարտուղար, էլեկտրասրտագրման բուժքույր, վիրահատարանի բուժքույր, վիրակապարանի բուժքույր, հերթապահ-բուժքույր-անզգայացնող, հերթապահ-բուժքույր, ներզննման կաբինետի բուժքույր, քույր տնտեսավար, տեխնիկ-պլոթեզավորող, բուժմատենավար, մատենավար	
Մշակույթ		
17.	Ռազմական թանգարանի տնօրենի տեղակալ-գիտական քարտուղար	6 312
18.	Երգի համույթի ղեկավար, պարային խմբի ղեկավար, ռազմական ինստիտուտի թանգարանի պետ	6 369
19.	Մշակութալուսավորչական աշխատանքների բաժանմունքի խմբագիր, թանգարանի գիտական աշխատող	6 426
20.	Պարարվեստի ուսուցիչ, ձևավորող նկարիչ, նկարիչ-դիզայներ, երաժիշտ	6 483
21.	Ակումբի, գրադարանի-պետ, ակումբի պետ-գրադարանավար, գրադարանի վարիչ	6 540
22.	Լուսաթղթակից, լուսանկարիչ, կինոմեխանիկ, կինոռադիոմեխանիկ	6 597

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂՆԵՐ		
23.	Հյուրանոցի տնօրեն, մարզիչ	7 480
24.	Հյուրանոցի տնօրենի տեղակալ, կաթսայատան պետ, պանսիոնատի պետ, լվացքատան պետ, հրթիռային վառելանյութի և վառելիքի բազայի պետի օգնական, պարենի և տեխնիկական միջոցների պահպանման բազայի պետի օգնական՝ նյութատեխնիկական ապահովման գծով, անասնաբույժ-դեղատան պետ, անասնաբույժ-դեղատան պետ-փորձագետ, անասնաբուժության հրահանգիչ-լաբորանտ, անասնաբուժակ, անասնաբուժության հրահանգիչ, լաբորանտ-մանրէաբան, կոշկակարական արհեստանոցի պետ-կոշկակար, ագտային կայանի տեխնիկ, բաղնիքի պետ, բաղնիքի պետ-օպերատոր, բյուրոյի պետ-օպերատոր, լվացքատան պետ, խմբի պետ, կենտրոնի պետ, կոմբինատի պետ-բաղնիքի պետ, հաշվարկի պետ, ճաշարանի պետ-խոհարար-հրահանգիչ, ճաշարանի պետ-խոհարար, խոհարար-հրահանգիչ, ջոկի հրամանատար-խոհարար, ջոկի հրամանատար-ճաշարանի պետ, տեխնիկ լաբորանտ, ՆՕ (նախկինում օգտագործված) պահեստամասերի պահեստի պետ, ավտոտեխնիկայի պահեստի պետ, պահեստարանի պետ, պահեստի պետ, պահոցապետ, պարենի և իրային գույքի պահեստի պետ, ռազմատեխնիկական գույքի պահեստի պետ, կոմունալ շահագործման ծառայության պահեստի պետ, հակահրդեհային գույքի պահեստի պետ, ջոկի հրամանատար-պահեստարանի պետ	26 148
25.	Պարետ- տեխնիկ- շենքերի վերակազմ, տեխնիկ շենքերի վերակազմ, հանրակացարանի պարետ, հանրակացարանի վարիչ, հյուրանոցի ադմինիստրատոր, լաբորանտ-մանրէաբան, բյուրոյի պետ-օպերատոր, գործավարության պետ, գյուղատնտես, զինվորական հաշվառման սեղանի պետ, սրբագրիչ, ուսումնական պիտույքների պահեստի պետ, տեխնիկ-լաբորանտ, տնային կառավարչության պետ	7 078

26.	Բարձրավոլտ ցանցերի էլեկտրիկ, էլեկտրիկ-օպերատոր, էներգետիկ, հերթապահ, հերթապահ-էլեկտրիկ, հերթապահ-դիզելավար, ավագ ընդունող-հանձնող, բրիգադավար, գանձապետ, գծագրող, հաշվետար, հնադարանապահ, էլեկտրամեխանիկ, էլեկտրամեխանիկ դիզելավար, էլեկտրամոնտյոր, էլեկտրատեխնիկ	6 546
27	ավագ տեսուչ, բազմացնող տեխնիկայի օպերատոր, գործավար, գործավար (ոչ գաղտնի գործավարության), գործավար-մեքենագրուհի, գրագիր, գրագիր-գծագրող, գրագիր-գործավար, դիսպետչեր, լաբորանտ-գծագրող, լաբորանտ-գործավար, մեքենագրուհի, մեքենարուհի գործավար, մեքենագրուհի-ոչ գաղտնի գործավարության գործավար, տեսուչ, տեսուչ հաշվառման գծով,	32 000
28.	էլեկտրամոնտյոր, էլեկտրիկ, էլեկտրիկ-դիզելավար, էլեկտրիկ-սանտեխնիկ, հերթապահ էլեկտրիկ-դիզելավար, ճոպանասարքի ավագ բանվոր, ավագ խոհարար,	26 176
29.	Վարորդներ ա) բեռնատար ավտոտրանսպորտի՝ ըստ բեռնատարողության (տոննա) - մինչև 5 տոննա - 5- 10 տոննա - 10-13 տոննա բ) մարդատար-ծառայողական ավտոտրանսպորտի՝ ըստ շարժիչի աշխատանքային ծավալի (լիտր) - մինչև 1,8 լիտր - 1,8-3,5 լիտր - 3,5 լիտրից ավելի	29 483
30.	հնոցապան-ջրմուղագործ, փականագործ-շոգեմղագործ, փականակագործ-սանտեխնիկ, հյուսն, հյուսն-ապակեգործ,	20 129
31.	Աղբահան, հերթապահ օպերատոր, օպերատոր-սանտեխնիկ,սանտեխնիկ, ախտահանող, խոհանոցի բանվոր, խոհանոցի օժանդակ բանվոր, օպերատոր, ճոպանասարքի բանվոր, քարտաշ, քույր տնտեսվար, սանիտար, սանիտար-ախտահանող, սանիտարուհի, սանիտարուհի-ախտահանող, սպասք լվացող, տեխնիկական աշխատող	9 125

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

